

Դատական Գործ N: ԵՔԴ/0030/02/08

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	18-07-2007
Հայցվոր/դիմող	
Անուն:	Ալվան Ներկ Իրանական ընկերություն
Հասցե:	ք.Երևան, Թեհրան, Խաֆտե-Տիր հրապարակ
Ներկայացուցիչ	
Անուն	Արմեն
Ազգանուն	Ռեդիկոսյան
Հասցե	ք.Երևան
Պատասխանող	
Անուն:	ՀՀ Արտոնագրային վարչության ապրանքային նշանների մոնիթինգի բաժին
Հասցե:	ք.Երևան, Գլխավոր պող. Կառավար. տուն 3
Պատասխանող	
Անուն	Վահիկ
Ազգանուն	Հակոբ Նաիրյան
Հասցե	ք.Երևան
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Այլ դատարանից ընդդատության կարգով
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	ապրանքային նշանը գրանցելու որոշումը վկայականներն անվավեր ճանաչելու
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	5.5
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	
Ամսաթիվ:	18-01-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քաղաքացիական
Դատավորի անուն:	Գոռ Գազիկի Հակոբյան

Որոշման ամսաթիվ:	21-01-2008
Դատաքննության ամսաթիվ:	21-03-2008
Դատաքննության ամսաթիվ:	09-04-2008
Դատաքննության ամսաթիվ:	27-05-2008
Դատաքննության ամսաթիվ:	05-06-2008
Դատաքննության ամսաթիվ:	17-07-2008
Դատաքննության ամսաթիվ:	27-08-2008
Դատաքննության ամսաթիվ:	03-09-2008
Դատաքննության ամսաթիվ:	05-09-2008
Դատաքննության ամսաթիվ:	22-09-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	12-03-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-07-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-07-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	28-08-2008
Այլ նշումներ:	
Հայցի լուծման ամսաթիվ:	22-09-2008
Հայցի լուծումը:	Մերժվել է
Հոդված	
Հոդված	109 Կետ 1
Հոդված	
Հոդված	47 Կետ 1
Հոդված	
Հոդված	51 Կետ 5
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	Գործ թիվ ԵՔԴ 0030/02/ 08թ. Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 22.09.2008թ. ք.Երևան Երևանի քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ՝ դատավոր Գոռ Հակոբյանի քարտուղարությամբ՝ Էռնա Խաչինյանի մասնակցությամբ՝ դիմողի ներկայացուցիչ՝ Արմեն Ումրշատյանի պատասխանողի ներկայացուցիչ՝ Արա Աբգարյանի երրորդ անձի ներկայացուցիչ՝ Վարդան Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով (գործի քննությունը հայտարարվել է ավարտված 2008 թվականի սեպտեմբերի 05-ին, վճիռը հրապարակվել է 2008 թվականի սեպտեմբերի 22 -ին) գործն ըստ դիմումի՝ «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության /պետական գրանցման համարն է՝ 42909/ ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության /պետ. գրանցման վկայական՝ N 28211003766, ՀՎՀՀ՝ 00844273/՝ ՀՀ արտոնագրային վարչության հայտերի հիման վրա ապրանքային նշանների գրանցումը և դրանց հիման վրա տրված վկայականներն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ

ՊԱՐԶԵՑ

I. Նկարագրական մաս

1. Դատավարական նախապատմությունը

18.07.2007 թվականին «Ալվան Ներկ» իրանական ընկերությունը դիմում է ներկայացրել ՀՀ տնտեսական դատարան ընդդեմ ՀՀ արտոնագրային վարչության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի և Վահիկ Հակոբ-Նաիրյանի՝ ՀՀ արտոնագրային վարչության թիվ 20010247 հայտի հիման վրա ապրանքային նշանը գրանցելու որոշումը, թիվ 6375 և 6982 վկայականներն անվավեր ճանաչելու պահանջների մասին: 23.07.2007 թվականին վերը նշված դիմումն ընդունվել է վարույթ: 24.09.2007 թվականին «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպությունը դիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ՀՀ արտոնագրային վարչության թիվ 20010247 և 20010248 հայտերի հիման վրա ապրանքային նշանների գրանցումն ու դրանց հիման վրա թիվ 6375 և 6982 վկայականներն անվավեր ճանաչելու պահանջների մասին: 15.10.2007 թվականին պատասխանող ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից դիմումի վերաբերյալ ներկայացվել է պատասխան: Նշված քաղաքացիական գործն ըստ առարկայական ընդդատության փոխանցվել է Երևանի քաղաքացիական դատարան: 18.01.2008 թվականին գործը հանձնվել է ինձ. 21.01.2008 թվականին այն իմ կողմից ընդունվել է վարույթ: 25.02.2008 թվականին պատասխանող կրկին անգամ դիմումի վերաբերյալ ներկայացրել է պատասխան, իսկ 17.07.2008 թվականին՝ լրացուցիչ պատասխան: Դատարանի 05.06.2008 թվականի որոշմամբ բավարարվել է պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը և սույն գործով որպես երրորդ անձ է ներգրավվել «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը: 22.07.2008 թվականին գործով երրորդ անձ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը ներկայացրել է դիմումի պատասխան: Գործը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 գլխի կանոնների համաձայն նախապատրաստվել է դատաքննության:

1. Դիմողի դիրքորոշումը

«Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը ձևավորվել է 30.01.2001 թվականին և ՀՀ-ում իրականացնում է Իրանի Իսլամական Հանրապետության «Ալվան ներկերի և ռետին

արտադրող» ընկերության ապրանքատեսականու մեծածախ և մանրածախ առևտուր: Որպես իր բաժնեմասի սեփականատեր «Ալվան ներկ» իրանական կազմակերպությունը, հիմնվելով «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սիամակ Էբադի Ամուդիի դիմումի վրա, 2006 թվականի հունիս ամսին հրավիրել է բաժնետերերի ընդհանուր ժողով, որտեղ քննարկվել է ընկերության տնօրեն Ռեզա Ալիխանզադեի զեկույցը և առաջարկները Հայաստանի Հանրապետությունում իրենց ընկերության հետագա գործունեության ուղղությամբ: Այդ զեկույցի հետևանքով ընդհանուր ժողովը որոշում է ընդունել «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սիամակ Էբադի Ամուդիին լիազորել որպես ֆիզիկական անձի ՀՀ ողջ տարածքում օգտագործել «Ալվան» ապրանքային նշանը՝ օժտելով վերջինիս «Ալվան» ընկերության պաշտոնական ներկայացուցչության բոլոր լիազորություններով: Նման կարգի որոշումն ակնկալում էր, որ Սիամակ Էբադի Ամուդիին օժտվելու էր իրավագործությամբ ընկերության անունից կնքելու գործարքներ և օգտագործելու «Ալվան» ապրանքային նշանը: Սակայն անտեսելով այս հանգամանքը, «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանիորեն որոշում է կայացնում «Ալվան» ներկերի և ռետինե իրերի արտադրության իրանական կազմակերպության որոշումը ներկայացնել ՀՀ արտոնագրային վարչություն և սրա հիման վրա ստանում են որոշում ապրանքային նշանն օգտագործելու մասին և վերցնում վկայագրեր, որոնց օրինականության հարցն էլ ներկայումս վիճարկվում է: Վերոհիշյալ իրավական փաստաթղթերն անօրինական են և վերցվել են օրենքի կոպիտ խախտումներով հետևյալ պատճառաբանությամբ.

1/ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171 հոդվածի պահանջների՝ ապրանքային նշանն այն նշաններն են, որոնցով որևէ անձի ապրանքները համապատասխանաբար տարբերվում են այլ անձի նույնատիպ ապրանքներից: Այս առումով «Ալվան» տառերով ապրանքային նշանը և կապույտ, դեղին, կարմիր գույներով տարբերանշանը հանդիսանում են «Ալվան ներկ» Իրանի ԻՀ կազմակերպության գրանցված ապրանքային նշանը, որը պահպանվում է ողջ աշխարհում.

2/ համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների՝ ապրանքային նշանի գրանցման հայտը ... պետական լիազոր մարմին է ներկայացնում այն անձը, որի անունով խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը: Եթե ենթադրելու լինենք, որ նման հայտի հիմքում ընկած է եղել «Ալվան ներկ» իրանական ընկերության որոշումը, ապա այդ որոշմամբ, որն առկա է արտոնագրային վարչությունում, հայտատու է ճանաչվել ֆիզիկական անձ Սիամակ Էբադի Ամուդիին, որն իրականում լիազորված է եղել միայն օգտագործելու ապրանքային նշանը, այլ ոչ թե՝ դիմելու այն գրանցելու համար.

3/ համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի օտարերկրյա անձինք ապրանքային նշանների գրանցման հետ կապված գործերը վարում են լիազոր մարմնում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով: Այս պարագայում, հիմնվելով վերը նշված որոշման վրա Սիամակ Էբադի Ամուդիին հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի և նրա անունով տրված որոշումը հիմք չի կարող հանդիսանալ արտոնագրային վարչությունում գործառնություն իրականացնելու համար.

4/ նույն հոդվածի նույն մասի 2-րդ նախադասությունն ասում է, որ արտոնագրային հավատարմատարի իրավասությունը վավերացվում է այն անձի կողմից տրված լիազորագրով, որի անունով խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը: Այդ ընկերությունը ոչ մեկին, այդ թվում նաև Սիամակ Էբադի Ամուդիին չի տվել լիազորագիր իր ապրանքային նշանը գրանցելու համար: Սա ևս մեկ անգամ հաստատվում է արտոնագրային վարչությունում

առկա գործով.

5/ համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի նույն կամ նմանատիպ ապրանքների համար ՀՀ-ում պահպանվող ֆիրմային անվանումը չփոթելու աստիճան նման ապրանքային նշանը կարող է գրանցվել միայն տվյալ ֆիրմայի անվանման իրավատիրոջ /իրավաբանական անձի/ համաձայնությամբ: Հենց հայտի մեջ և որոշման տեքստում ամրագրված է, որ նման ապրանքային նշանի իրավատերն է հանդիսանում «Ալվան ներկ» իրանական կազմակերպությունը, որը որևէ համաձայնություն չի տվել իր ապրանքային նշանը ՀՀ-ում գրանցելու համար.

6/ ապրանքային նշանի օգտագործման իրավագործությունն իրանական կազմակերպությունը չէր կարող տալ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը, քանի որ շուրջ յոթ տարի է, ինչ նման ապրանքատեսակների ՀՀ ներկրում է «Առանցք» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը՝ հիմնվելով մատակարարման պայմանագրերի վրա.

7/ հայտը ներկայացվել է 18.04.2001 թվականին և այն գրանցված է նշանների գրանցման պետական մատյանում 26.11.2001 թվականին: Այս հանգամանքը չի կարող իրականություն հանդիսանալ, քանի որ «Ալվան» իրանական ընկերության որոշումը Հայաստանի Հանրապետություն է բերվել և հանձնվել փայտտերերին 11.05.2006 թվականին, այս մասին առկա է փայտտեր Վահիկ Նաիրյանի գրավոր ստացականն այդ որոշումը ստանալու մասին, սա հաստատում է, որ որոշումը կայացվել է ոչ թե 2001, այլ 2006 թվականին: Այնուհետև Սիամակ Էբադի Ամուդին գործադիր տնօրեն է նշանակվել 31.03.2006 թվականին՝ հիմք ՀՀ իրավաբանական անձի գրանցման վկայականի թիվ 07 ներդիրը.

8/ համաձայն նույն օրենքի 8-րդ հոդվածի պահանջների պարտադիր է հայտի նախնական փորձաքննության անցկացումը: Այդ փորձաքննությունն անց է կացվել կոպիտ խախտումներով, քանի որ առկա է «Ալվան» իրանական կազմակերպության ապրանքային նշանը, իսկ նույն օրենքում հստակ նշվում է, որ ՀՀ-ը պետք է հարգի Փարիզյան կոնվենցիային միացած բոլոր պետությունների տարածքում գրանցված իրավաբանական անձանց ապրանքային նշանների իրավական պաշտպանության սկզբունքները, իսկ այն հանգամանքը, որ «Ալվան» ապրանքային նշանը գրանցված և ճանաչված է առնվազն 5 միջազգային կազմակերպություն և պետությունների կողմից՝ դա փաստ է և նույնիսկ ամրագրված է չարաբաստիկ որոշման մեջ: Մասնավորապես՝ 1/ Ֆրանսիա, Փարիզ 2002 թվական, 2/ Ժնև 2003 թվական, 3/ Ֆրանկֆուրտ 2002 թվական, 4/ Գերմանիա ISO 9001-2000 2004 թվական, 5/ Ասիական պետությունների լիգա 2001 Օթվական և 6/ Exemplary Unit of Standard 2002: Նման տիտղոսային և միջազգային միջպետական համաձայնագրերի առկայության և անդամակցության պարագայում նախնական փորձաքննությունը չէր կարող ուղղակի չանդադարադարձաբար այս խնդրին և պահանջեր գոնե մի լիազորագիր կամ պայմանագիր՝ կնքված «Ալվան» իրանական կազմակերպությունից, որը չի կատարվել:

9. Նույն օրենքի 48 հոդվածն ուղղակի սահմանում է օտարերկրա անձանց ՀՀ-ն հետ պայմանագրերի առկայության պայմաններում փոխադարձության սկզբունքով պաշտպանության իրավագործությունը, որը խախտվել է արտոնագրային վարչության կողմից: Համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի պահանջների՝ ապրանքային նշանի բացառիկ իրավունքի խախտման դեպքում անձը կարող է դիմել դատարան իր խախտված իրավունքների պաշտպանության հարցով:

Դիմողի ներկայացուցիչը խնդրեց անվավեր ճանաչել ՀՀ արտոնագրային վարչության թիվ 20010247 և 20010248 հայտերի հիման վրա ապրանքային նշանների գրանցումը, դրանց հիման վրա

տրված թիվ 6375 և 6982 վկայականները:

2. Պատասխանողի դիրքորոշումը

Դիմումով ներկայացված բոլոր պահանջների դեմ առարկում եմ ամբողջությամբ՝ հետևյալ հիմքերով.

Դիմումի 1-ին և 2-րդ պարբերությունների մեջ կան հակասություններ. 1-ին պարբերությունում դիմողը նշում է, որ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սիամակ Էբադի Ամուղիի դիմումի հիման վրա «Ալվան ներկ» Իրանական կազմակերպությունը 2006 թվականի հունիս ամսին հրավիրել է բաժնետերերի ընդհանուր ժողով, որտեղ քննարկել են ընկերության տնօրենի՝ Ռեզա Ալիխանզադեի զեկույցը և առաջարկները Հայաստանի Հանրապետությունում իրենց ընկերության հետագա գործունեության ուղղությամբ և, որ այդ զեկույցի արդյունքում ընդհանուր ժողովն ընդունել է որոշում, որով լիազորել է «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սիամակ Էբադի Ամուղիին որպես ֆիզիկական անձ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում օգտագործել «Ալվան» ապրանքային նշանը՝ օժտելով վերջինիս պաշտոնական ներկայացուցչության բոլոր լիազորություններով, իսկ երկրորդ պարբերությունում նշում է, որ «սակայն անտեսելով այս հանգամանքը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության փայատերեր Վահիկ Նաիրյանը և Իրանի Արտաքին ներդրումներ ընկերությունն ի դեմս Ֆոելյուն Ռաշիդիի, միակողմանիորեն որոշում են կայացնում աշխատանքից ազատել գործադիր տնօրեն Սիամակ Էբադի Ամուղիին և զուգահեռաբար «Ալվան ներկ» Իրանական կազմակերպության որոշումը ներկայացնում են ՀՀ արտոնագրային վարչություն և դրա հիման վրա ստանում են որոշում ապրանքային նշանն օգտագործելու մասին և վերցնում են վկայագրեր... »:

«Ալվան» համակցված ապրանքային նշանի հայտը գործակալություն ներկայացվել է 18.04.2001 թվականին և ոչ տրամաբանորեն է հնարավոր պատկերացնել, և ոչ էլ ֆիզիկապես հնարավոր չէ, որպեսզի անձը 2001թվականին անտեսի ինչ որ որոշում, որը դեռ պետք է ընդունվի 2006 թվականին, այսինքն 5 տարի հետո, և դիմողի կողմից նման պնդումն անհիմն է, անհասկանալի և այս հանգամանքը գործակալության կողմից անընդունելի է:

Դիմողը դիմումի 2-րդ պարբերությունում նշում է, որ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության փայատերեր Վահիկ Նաիրյանը և Իրանի Արտաքին ներդրումներ ընկերությունը «Ալվան ներկ» Իրանական կազմակերպության որոշումը ներկայացնում են ՀՀ արտոնագրային վարչություն և դրա հիման վրա ստանում են որոշում ապրանքային նշանն օգտագործելու մասին և վերցնում են վկայագրեր... », հիմնվելով այս պնդմանը, դիմումի 2-րդ կետում՝ ենթադրություն անելով, գալիս է եզրակացության, որ «համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ ապրանքային նշանի գրանցման հայտը... պետական լիազոր մարմին է ներկայացնում այն անձը, որի անունով խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը և եթե ենթադրելու լինենք, որ նման

հայտի հիմքում ընկած է «Ալվան ներկ» իրանական կազմակերպության որոշումը, ապա այդ որոշմամբ, որն առկա է արտոնագրային վարչությունում, հայտատու է ճանաչվել ֆիզիկական անձ Սիամակ Էբադի Ամուդիին: Դիմողի այս պնդումը և ենթադրությունն իրականությանը չեն համապատասխանում և գործակալության կողմից անընդունելի են հետևյալ պատճառով, բացի այն, որ ժամանակագրական առումով դա հնարավոր չէ, որպեսզի 2001 թվականին ներկայացվի 2006 թվականի որոշում, լրացուցիչ հայտնում են, որ գրանցման թիվ 6375 և 6982 ապրանքային նշանների գրանցման հայտեր ներկայացնելուց գործակալություն որևէ որոշում ընդհանրապես չի ներկայացվել: Ինչ վերաբերում է հայտատու ճանաչվելուն, ապա օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանի հայտը ներկայացնում է այն անձը, որի անունով խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը, հետևաբար հայտատու է հանդիսանում այն անձը, որը ներկայացրել է հայտը և որի անունով խնդրարկվել է ապրանքային նշանի գրանցումը, տվյալ դեպքում հայտատու է հանդիսանում «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը, այլ ոչ թե Սիամակ Էբադի Ամուդիին, Վահիկ Նաիրյանը կամ Իրանի արտաքին ներդրումներ ընկերությունը:

Սույն պատասխանի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում մեր կողմից ներկայացված առարկությունները հիմնավորվում են «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված ապրանքային նշանների գրանցման համար 20010247 եւ 20010248 հայտերով ու դրանց կից ներկայացված փաստաթղթերով, որոնք հիմնավորում են, որ գրանցման թիվ 6375 և 6982 ապրանքային նշանների գրանցման հայտերը ներկայացվել են 2001 թվականին «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության կողմից և, որ որևէ որոշում ապրանքային նշանների գրանցման համար 20010247 և 20010248 հայտերը ներկայացնելուց չի ներկայացվել (ապրանքային նշանների գրանցման համար 20010247 և 20010248 հայտերի պատճենները կցվում են):

Դիմողը նշում է, որ «...ստանում են որոշում ապրանքային նշանի օգտագործելու մասին», հայտնում են, որ նման որոշում գործակալությունը երբևից է չի կայացրել և որևէ մեկի չի տրամադրել, ինչպես նաև օրենքով նման որոշումներ կայացնելու լիազորություն չունի: Գրանցման թիվ 6982 եւ 6375 ապրանքային նշանների գրանցումները կատարվել են համապատասխանաբար 24.09.2002 թվականին և 26.11.2001 թվականին, հետևաբար «Ալվան ներկ» իրանական կազմակերպության 2006 թվականի հունիսի ընդհանուր ժողովի որոշումը, ըստ դիմողի, որով լիազորվել է «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սիամակ Էբադի Ամուդիին որպես ֆիզիկական անձ, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում օգտագործել «Ալվան» ապրանքային նշանը, օժտելով վերջինիս պաշտոնական ներկայացուցչության բոլոր լիազորություններով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի համաձայն՝ ժամանակագրական առումով գործի քննությանը վերաբերել չի կարող և չի կարող 2001 և 2002 թվականների գրանցումների որևէ հանգամանքի վերաբերել: Դիմումի առաջին կետում դիմողը նշել է, որ «Ալվան» տառերով ապրանքային նշանը և կապույտ, դեղին, կարմիր գույներով տարբերանշանը հանդիսանում են «Ալվան ներկ» Իրանի ԻՀ

կազմակերպության գրանցված ապրանքային նշանը, որը պահպանվում է ողջ աշխարհում», այս պնդումը գործակալության անընդունելի է հետևյալ պատճառով:

Նախ, գործող օրենքի 2-րդ հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման կամ սույն օրենքի համաձայն ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուժով»: Եթե դիմողը նկատի ունի գրանցման թիվ 6375 և 6982 ապրանքային նշանները, ապա «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության կողմից համապատասխան հայտերը ներկայացնելու թվականի դրությամբ այդ նշանները Հայաստանի Հանրապետությունում ոչ գրանցված են եղել, ոչ հանրահայտ ապրանքային նշաններ են ճանաչված եղել և միջազգային պայմանագրի ուժով դրանց իրավական պահպանություն տրամադրված չի եղել: Այսինքն, «Ալվան ներկ» կազմակերպության անունով Հայաստանի Հանրապետությունում նշված ապրանքային նշանները գրանցված չեն եղել և որևէ այլ անձի անունով նույնպես: Այլ երկրներում ապրանքային նշանի գրանցված կամ չգրանցված լինելու հանգամանքը Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի գրանցման հետ որևէ աղընչություն չունի, եթե գործող օրենքի 2-րդ հոդվածում նշված միջազգային պայմանագրի ուժով այդ ապրանքային նշանին Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն տրամադրված չէ: Դիմումի երրորդ եւ չորրորդ կետերում հիշատակված հոդվածի նշված նորմերը տվյալ դեպքում կիրառելի չեն և անընդունելի, քանի որ հայտը ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձի կողմից և այն չի հանդիսանում օտարերկրյա իրավաբանական անձ, որպեսզի հայտը պարտադիր կերպով ներկայացնի լիազոր մարմնում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով, որպես ապացույց դատարան ներկայացված ապրանքային նշանների գրանցման համար 20010247 և 20010248 հայտերում դրված կնիքներից ակնհայտ է, որ հայտը ներկայացվել է Հայաստանյան կազմակերպության կողմից: Դիմողը դիմումի 5-րդ կետում նշել է, որ «համաձայն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի նույն կամ նույնատիպ ապրանքների համար ՀՀ-ում պահպանվող ֆիրմային անվանումը շփոթելու աստիճան նման ապրանքային նշանը կարող է գրանցվել միայն տվյալ ֆիրմային անվանման իրավատիրոջ համաձայնությամբ:», սակայն որ ֆիրմային անվանման մասին է խոսքը գնում՝ անհասկանալի է և անընդունելի: Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ գրանցման թիվ 6375 ապրանքային նշանն ընդհանրապես բառային տարր չի պարունակում, որպեսզի ֆիրմային անվան հետ շփոթելու աստիճան նման լինի, իսկ գրանցման թիվ 6982 համակցված ապրանքային նշանը պարունակում է «Ալվան շին փարս» բառերը, որոնք առկա են նաև հայտատուի ֆիրմային անվանման մեջ: Հետևաբար օրենքի այդ նորմի մատնանշումն անհիմն է և օրենքի որևէ խախտում տեղի չի ունեցել: Դիմողը շարունակելով խոսում է ապրանքային նշանի մասին, որը ևս անհիմն և անհասկանալի է, ավելին, նշում է որ «հենց հայտի մեջ և

որոշման տեքստում ամրագրված է, որ նման ապրանքային նշանի իրավատերն է հանդիսանում «Ալվան ներկ» իրանական կազմակերպությունը», որը իրականությանը չի համապատասխանում, հայտի և որոշումների պարզ ուսումնասիրությունից ակնհայտ է, որ նման բան հայտերում և որոշումներում չկա:

Դիմող կողմը դիմումի 6-րդ կետում նշում է, որ «...իրանական կազմակերպությունն ապրանքային նշանի օգտագործման իրավագործությունը չէր կարող տալ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը, քանի որ շուրջ 7 տարի է նման ապրանքատեսականի ներկրում է «Առանցք» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը», և այլն: Այս պնդումը ևս անընդունելի է: Նախ իրանական որ կազմակերպության մասին է խոսքը գնում, կարող ենք ենթադրել, որ ըստ դիմումում նշվածի «Ալվան ներկ» Իրանի ԻՀ կազմակերպության, ամեն դեպքում այդ կազմակերպությունը վիճարկվող ապրանքային նշանների վերաբերյալ ոչ միայն օգտագործման, այլև որևէ այլ իրավունք չի կարող տրամադրել որևէ մեկին Հայաստանի Հանրապետությունում, քանի որ հենց ինքը՝ «Ալվան ներկ» կազմակերպությունը, Հայաստանի Հանրապետությունում այդ ապրանքային նշանների նկատմամբ որևէ իրավունք չունի: Գործող օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից...», իսկ գործող օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման կամ սույն օրենքի համաձայն՝ ապրանքային նշանը Հայաստանի

Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուժով: Իսկ դիմողի կողմից մատնանշված ապրանքային նշանները Հայաստանի Հանրապետությունում «Ալվան ներկ»

կազմակերպության անունով ոչ գրանցված են, ոչ ճանաչվել են հանրահայտ և ոչ էլ պահպանվում են միջազգային պայմանագրի ուժով: Այսինքն, Հայաստանի Հանրապետությունում այդ ապրանքային նշանների նկատմամբ որևէ իրավունք «Ալվան ներկ» կազմակերպությունը չի ունեցել և չունի, որպեսզի օգտագործման թույլտվություն տա որևէ մեկի: Դիմումի 6-րդ կետում նշված պնդումը գործի համար էական նշանակություն ունենալ չի կարող, քանի որ ապրանքային նշանների գրանցումը պայմանավորված չէ ապրանքային նշանի օգտագործմամբ և օրենքը նման պահանջ չի սահմանում: Ինչ վերաբերում է դիմումի 7-րդ կետում նշված՝ դիմողի կարծիքին, որ ապրանքային նշանի գրանցում չէր կարող տեղի ունենալ 2001 թվականին, ապա հայտնում են, որ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ գերատեսչությունն, ապրանքային նշանի գրանցմանը վերաբերող և սույն օրենքի 14 հոդվածով նախատեսված տեղեկությունները գրանցման օրվանից երեք ամսվա ընթացքում հրապարակում է իր պաշտոնական տեղեկագրում: Նշենք, որ թիվ 6982 ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունը հրապարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում 2002 թվականի դեկտեմբերի 30-ի N4 (24) համարում, իսկ թիվ 6375 ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունը հրապարակվել է

«Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում 2002 թվականի մայիսի 8-ի N1 համարում (պատճենները կցվում են), սույն ապացույցները հիմնավորում են, որ գրանցումները տեղի են ունեցել 2001 և 2002 թվականներին: Եվ այն մեղադրանքը, որը կողմն իր դիմումում նշել է առ այն, որ «2001թվականին կատարված գրանցումը չի կարող իրականություն հանդիսանալ»՝ անհիմն ենթադրությունների արդյունք է և անընդունելի: Ինչ վերաբերում է դիմողի կողմից դիմումի 8-րդ կետում նշված այն պնդմանը, որ օրենքում հստակ նշվում է, որ ՀՀ-ն պետք է հարգի Փարիզյան կոնվենցիային միացած բոլոր պետությունների տարածքում գրանցված իրավաբանական անձանց ապրանքային նշանների իրավական պաշտպանության սկզբունքները, ապա հայտնում են, որ օրենքը նման պահանջ չի սահմանում: Դիմողի կողմից դիմումի 8-րդ կետում նշվել է, որ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ նախնական փորձաքննությունն անց է կացվել կուպիտ խախտումներով, քանի որ առկա է «Ալվան» իրանական կազմակերպության ապրանքային նշանը և դիմումում թվարկված ըստ դիմողի տիտղոսային և միջազգային միջպետական համաձայնագրերի առկայության և անդամակցության պարագայում նախնական փորձաքննությունը չէր կարող ուղղակի չանդրադառնար այս խնդրին և պահանջեր գոնե մեկ լիազորագիր կամ պայմանագիր՝ կնքված «Ալվան» իրանական կազմակերպությունից, որը չի արվել»: Դատարանին հայտնում են, որ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ նախնական փորձաքննության ընթացքում ստուգվում են հայտի կազմը, անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, ինչպես նաև դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին, այսինքն՝ նախնական փորձաքննության համար դիմողի կողմից մատնանշված պարտականություն օրենքով դրված չէ: Նշենք, որ ապրանքային նշանին նույնական կամ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների որոնումը, համաձայն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (հաստատված ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի ապրիլի 12-ի N 85-Ն հրամանով, կատարվում է այն նշանների մեջ, որոնք «1) նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշաններ են. 2) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող՝ ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններ են. 3) նույն կամ նույնատիպ ապրանքների համար օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող հանրահայտ ճանաչված այլ անձանց ապրանքային նշաններ են, և քանի որ դիմողի կողմից մատնանշված ապրանքային նշանները Հայաստանի Հանրապետությունում «Ալվան ներկ» կազմակերպության անունով ոչ գրանցված են, ոչ ճանաչվել են հանրահայտ և ոչ էլ պահպանվում են միջազգային պայմանագրի ուժով, ապա փորձաքննության ընթացքում դիմողի կողմից մատնանշված «Ալվան» իրանական կազմակերպության

ապրանքային նշանն անտեսելու մասին խոսելը տեղին չէ և ակնհայտ է, որ դիմողի փաստարկն անհիմն է և անընդունելի: Ինչ վերաբերում է դիմողի կողմից դիմումի 8-րդ և 9-րդ կետերում միջազգային պայմանագրերին և օրենքի 48-րդ հոդվածին հղում կատարելուն, ապա դիմողը սխալ է մեկնաբանել օրենքի 48-րդ հոդվածը, որը սահմանում է, որ 1. օտարերկրյա անձինք Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան կամ փոխադարձության սկզբունքով օգտվում են սույն օրենքով նախատեսված իրավունքներից և կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության անձանց հավասար, այսինքն, խոսքը գնում է օտարերկրյա անձանց կողմից օրենքով սահմանված իրավունքներից օգտվելու մասին, և ինչ որ պաշտպանության իրավագործությունը խախտելու մասին դիմողի պնդումն անհիմն և անընդունելի է: Ինչ վերաբերում է «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիային», ապա հարկ եմ համարում նշել, որ այդ կոնվենցիան գլոբալ պահպանության փաստաթուղթ չէ, այլ ընդհանրելով սահմանում է որոշ նորմեր, որոնք կիրառվում են Փարիզյան միության անդամ երկրների կողմից: Մասնավորապես դա կարգավորվում է *Disquincies* (միության երկրներից մեկում պահպանվող նշանները պահպանությունը միության մնացած երկրներում) հոդվածով, ըստ որի այլ երկրներում պահպանություն ապահովելու համար անհրաժեշտ է հայտ ներկայացնել տվյալ երկիր, այսինքն պահպանությունն ինքնստիքյան չի ապահովվում: Դիմողը դիմումում նշել է, որ գործող օրենքի 46-րդ հոդվածի պահանջների համաձայն խախտվել է ապրանքային նշանի իր բացառիկ իրավունքը, սակայն դիմող ընկերությունը չի հիմնավորել, թե որ ապրանքային նշանի նկատմամբ իր ունեցած բացառիկ իրավունքն է խախտվել և ընդհանրապես Հայաստանի Հանրապետությունում դիմողը որևէ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունք ունի, թե՛ ոչ: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2 հոդվածի՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, իսկ դիմողը չի ներկայացրել դատարանին, թե իր որ իրավունքի, ազատության պաշպանության համար է դիմել դատարան:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ 1. փորձաքննության ցանկացած որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի դրա ստացման օրվանից երեք ամսվա ընթացքում բողոք ներկայացնել լիազոր մարմնի բողոքարկման խորհուրդ (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ): 2. Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է լիազոր մարմնի կողմից հաստատված կարգով: 3. Փորձաքննության ցանկացած որոշմանը կամ բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումը ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան, այսինքն որոշումը թե վարչական, և թե դատական կարգով բողոքարկելու իրավունք ունի միայն հայտատուն, այլ ոչ թե ցանկացած անձ, տվյալ դեպքում «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը, իսկ «Ալվան ներկ»

կազմակերպությունը վիճարկվող որոշումը բողոքարկելու իրավունք չունի: Բացի այդ, որոշումը բողոքարկելու համար նույն հոդվածով սահմանված է վեցամսյա ժամկետ, և այդ ժամկետն անցել է արդեն ավելի քան հինգ տարի: Այսինքն, դիմողը վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք չունի: Դիմողը դիմումում երկրորդ և երրորդ պահանջ է ներկայացրել, համապատասխանաբար, թիվ 6375 և 6982 վկայականներն անվավեր ճանաչելը, սակայն նման պահանջ ներկայացնելը չի բխում օրենքի պահանջներից և օրենքով նման պահանջ ներկայացնելը սահմանված չէ և չի էլ կարող լինել, քանի որ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանի իրավական պահպանությունը տրամադրվում է օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման կամ սույն օրենքի համաձայն ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուժով, այլ ոչ թե վկայագրի տրամադրմամբ: Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի վկայագիրը հաստատում է ապրանքային նշանի գրանցման փաստը, առաջությունը, ինչպես նաև ապրանքային նշանի վկայագրում նշված ապրանքների համար ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը: Ավելին, օրենքով ապրանքային նշանի վկայագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ որևէ նորմ սահմանված չէ: Հետևաբար նման պահանջներ ներկայացնելն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջից:

Ի լրումն պատասխանի՝ պատասխանողի ներկայացուցիչը դատարանին հայտնեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության համակարգի բարեփոխումների և մի շարք պետական մարմինների վերակազմակերպման մասին» N197 որոշման 1-ին կետով ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունը ու ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության հեղինարկային իրավունքների ազգային գործակալությունը միացման ձևով վերակազմակերպվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կազմում գործող ՀՀ մտավոր սեփականության գործակալության՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով և գործակալությունը հանդիսանում է ՀՀ արտոնագրային վարչության իրավահաջորդը, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի 21.04.2008թ ՆՀ-85-Ն՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1063 հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», հրամանագրի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը» վերանվանվել է «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության»: Հետևաբար Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը հանդիսանում է ՀՀ արտոնագրային վարչության իրավահաջորդը:

Քանի որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2000 թվականի մարտի 20-ին, ստորագրված 31.03.2000 թվականի ՀՕ-41

օրենք) ենթարկվել է փոփոխությունների 2003 թվականին, 2005 թվականին և 2007 թվականին, վիճարկվող ապրանքային նշանների գրանցման ժամանակ գործող «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքին հղումը սույն առարկությունում օգտագործվել է «օրենք» բառով, իսկ փոփոխված «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքին հղումը սույն առարկությունում օգտագործվել է «գործող օրենք» բառերով: Ինչ վերաբերում է ապրանքային նշանի (հայտի համար No 20010247) գրանցմանը, ապա այն իրականացվել է օրենքի համաձայն. այսպես, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, այն է՝ արանքային նշանի գրանցման հայտը Հայաստանի Հանրապետության արտոնագրային գերատեսչություն է ներկայացնում այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որի անունով խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը, այսինքն, ով կներկայացնի հայտ՝ դիմելով ապրանքային նշանի իր անունով գրանցելու, այդ անձի անունով էլ օրենքով սահմանված կարգով կկատարվի ապրանքային նշանի գրանցումը, տվյալ դեպքում պատկերային ապրանքային նշանի գրանցման թիվ 20010247 հայտը գործակալություն է ներկայացրել «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը 18.04.2001 թվականին և խնդրել է հայտի մեջ նշված պատկերը գրանցել որպես ապրանքային նշան իր՝ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ: Հայտը ներկայացվել է օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ինչպես նաև կից ներկայացվել է տեղեկանք հայտատուի աշխատողների թվաքանակի մասին, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրն ու ապրանքային նշանի պատկերը վեց օրինակից: Այսինքն, «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունն օգտվելով օրենքով ընձեռված հնարավորությունից օրենքին համապատասխան և սահմանված կարգով ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացրել: Իսկ դիմումի 2-րդ կետում նշված դիմողի ենթադրությունը, որ որոշման հիմքում դրված է եղել «Ալվան ներկ» կազմակերպության որոշումը՝ իրականությանը չի համապատասխանում, հետևաբար ամբողջ այդ ենթադրյալ եզրահանգումները տեղին չեն և ընդհանրապես որևէ փաստական և իրավական հիմք չունեն:

Հայտ ներկայացնելուց հետո, օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և 9-րդ հոդվածի համաձայն կատարվել է հայտի նախնական փորձաքննություն և հայտատուն 25.04.2001 թվականին ծանուցվել է հայտը քննարկման ընդունվելու և հայտի ներկայացման թվականի մասին, որն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հանդիսանում է հայտի առաջնությունը: Նախնական փորձաքննությունից հետո օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն կատարվել է հայտարկված նշանի փորձաքննությունը և ստուգվել է հայտարկված նշանի համապատասխանությունն օրենքի 11-րդ հոդվածի և 12-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Հաշվի առնելով, որ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հայտարկված նշանի փորձաքննության անցկացումն ըստ էության կայանում է նշանի գրանցումը մերժելու հիմքերի ի հայտ բերելու մեջ և, քանի որ մերժման որևէ հիմք չի հայտնաբերվել, 23.10.2001 թվականին ընդունվել է ապրանքային նշանը գրանցելու մասին որոշում: Որից

հետո համաձայն օրենքի 14-րդ եւ 15-րդ հոդվածների կատարվել է ապրանքային նշանի գրանցումը և տրվել է գրանցման վկայագիր: Այսինքն ապրանքային նշանի գրանցումը կատարվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է «ALVAN SHIN-PARS ԱԼՎԱՆ ՇԻՆ-ՓԱՐՍ» բառերը պարունակող համակցված ապրանքային նշանի (հայտի համար No 20010248) գրանցմանը, ապա այն ևս իրականացվել է օրենքի համաձայն. այսպես, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության 18.04.2001 թվականին համակցված ապրանքային նշանի գրանցման հայտ է (հայտի համար No 20010248) ներկայացրել գործակալություն և խնդրել է հայտի մեջ նշված պատկերը գրանցել որպես ապրանքային նշան իր՝ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ: Հայտը ներկայացվել է օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ինչպես նաև կից ներկայացվել է տեղեկանք հայտատուի աշխատողների թվաքանակի մասին, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրն ու ապրանքային նշանի պատկերը վեց օրինակից: Այսինքն «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունն օգտվելով օրենքով ընձեռված հնարավորությունից օրենքին համապատասխան եւ սահմանված կարգով ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացրել: Հայտ ներկայացնելուց հետո, օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և 9-րդ հոդվածի համաձայն կատարվել է հայտի նախնական փորձաքննություն և հայտատուն 14.05.2001 թվականին ծանուցվել է հայտը քննարկման ընդունվելու և հայտի ներկայացման թվականի մասին, որը օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հանդիսանում է նշանի առաջնությունը: Նախնական փորձաքննությունից հետո օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն կատարվել է հայտարկված նշանի փորձաքննությունը և ստուգվել է հայտարկված նշանի համապատասխանությունը օրենքի 11-րդ հոդվածի և 12-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Հաշվի առնելով, որ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հայտարկված նշանի փորձաքննության անցկացումն ըստ էության կայանում է նշանի գրանցումը մերժելու հիմքերի ի հայտ բերելու մեջ և, քանի որ, մերժման որևէ հիմք չի հայտնաբերվել 10.09.2002 թվականին ընդունվել է ապրանքային նշանը գրանցելու մասին որոշում: Որից հետո համաձայն օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների կատարվել է ապրանքային նշանի գրանցումը և տրվել է գրանցման վկայագիր: Այսինքն, ապրանքային նշանի գրանցումը կատարվել է օրենքի պահանջներին համապատասխան: Ինչ վերաբերում է փորձաքննության որոշումների բովանդակությանը, ապա հայտնում եմ, որ «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» /հաստատված ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարարի 12 ապրիլի 2005թվականի N 85-Ն հրամանով/ 84 եւ 85-րդ կետերի համաձայն՝ ապրանքային նշանը գրանցելու մասին որոշման մեջ հիմնականում նշվում են հետևյալ տեղեկությունները՝ 1/ հայտի համարը. 2/ հայտի ներկայացման թվականը. 3/ կոնվենցիայով կամ ցուցահանդեսային առաջնությանը վերաբերող տվյալները (եթե դրանք կան/. 4/ հայտատուն. 5)ապրանքային նշանի պատկերը. 6/ չպահպանվող տարրերի նշումը /եթե դրանք կան/: Այս դեպքում բերվում են

օրենքին և սույն կարգի համապատասխան ապրանքային նշանի տարրերի պահպանությունը մերժելու հիմքերը. 7/ նշանի գույնը կամ գունային համակցությունը /եթե խնդրարկվում է գունավոր ապրանքային նշան/. 8/ ԱԾԱԴ դասերին համապատասխան խմբավորված ապրանքների ցանկը: .Ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշման մեջ հիմնականում նշվում են սույն կարգի 84-րդ կետի 1, 2, 4 և 5 ենթակետերը և բերվում են օրենքին և սույն կարգին համապատասխան ապրանքային նշանի գրանցումը մերժելու հիմքերը: Նույնաբովանդակ նորմեր են սահմանված նաև վիճարկվող ապրանքային նշանների գրանցման ժամանակ գործող «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կանոնների» /հաստատված ՀՀ արտոնագրային վարչության՝ Հայարտոնագրի, պետի 2000թ հուլիսի 31-ի N 42 հրամանով/ 78 և 79-րդ կետերը: Հայցվորը գրանցման թիվ 6375 և 6982 ապրանքային նշանների գրանցումը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171 հոդվածի՝ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 12-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետի, 46-րդ և 48-րդ հոդվածների՝ ըստ հայցվորի, խախտման հիմքերով: Սակայն գործող օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ ապրանքային նշանի գրանցումը կամ նշանի միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության տրամադրումը կարող է վիճարկվել և ճանաչվել անվավեր՝ ամբողջովին կամ մասնակիորեն՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ կամ ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրման մասին տեղեկությունների պաշտոնական հրապարակման օրվանից 5 տարվա ընթացքում, եթե իրավական պահպանությունը տրամադրվել է սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ. ամբողջովին՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ. ամբողջովին՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է Փարիզյան կոնվենցիայի մասնակից որևէ պետությունում տվյալ նշանի սեփականատերը հանդիսացող անձի գործակալի կամ ներկայացուցչի անունով՝ առանց տվյալ անձի թույլտվության, այսինքն, գրանցման թիվ 6375 պատկերային ապրանքային նշանը չի կարող վիճարկվել և անվավեր ճանաչվել հայցվորի կողմից նշված հիմքերով: Ինչ վերաբերում է գրանցման թիվ 6982 համակցված ապրանքային նշանին, ապա այն ևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171 հոդվածի՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 46-րդ եւ 48-րդ հոդվածների հիմքերով չի կարող վիճարկվել և անվավեր ճանաչվել, իսկ 12-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետի վերաբերյալ մեր կողմից ներկայացված առարկություններով ապացուցել ենք, որ որևէ խախտում տեղի չի ունեցել: Գործակալությունն ապացուցել է նաև, որ վիճարկվող ապրանքային նշանների գրանցումները տեղի են ունեցել օրենքի պահանջներին համապատասխան, իսկ հայցվորի (դիմողի) պահանջները հիմնված

են իրականությանը չհամապատասխանող կամ գոյություն չունեցող հանգամանքների, ինչպես նաև մեր կարծիքով միտումնավոր կերպով խեղաթյուրված հանգամանքների վրա և փաստական ու իրավական հիմքերից զուրկ են:

3. Երրորդ անձի դիրքորոշումը

Դիմողի կողմից ներկայացված պահանջներն անհիմն են և ենթակա մերժման հետևյալ պատճառով.

Դիմումի առաջին կետում նշված է. «Այս առումով «Ալվան» տառերով ապրանքային նշանը և կապույտ, դեղին, կարմիր գույներով տարբերանշանը հանդիսանում են «Ալվան ներկ» Իրանի ԻՀ կազմակերպության գրանցված ապրանքային նշանը, որը պահպանվում է ողջ աշխարհում»: Շարադրվածի կապակցությամբ պետք է նշել, որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է կամ օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման կամ սույն օրենքի համաձայն ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուժով: Այս առումով նշենք, որ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը 18.04.01 թվականին N 20010248 հայտով՝ հայտարկված նշանի պատկերը նկարագրականում «ներկայացված է ապրանքային նշան շրջանի մեջ արծիվ, վերևում գրված ԱԼՎԱՆ, ԸԽԹԸԾ, ALVAN» ՀՀ մտավոր սեփականության գործակալության 24.09.02 թվականի N 6982 վկայագրով ապրանքային նշանի սեփականատերը հանդիսանում է «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը: ՀՀ արտոնագրային վարչության 26.11.01 թվականի N 6375 վկայականով ըստ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության 18.04.01 թվականի 20010247 հայտի կարմիր, կապույտ, դեղին և սև գունային համակցությամբ պահպանությամբ գրանցվել է ապստրակտ վրձնի հետք հայտարկմամբ ապրանքային նշանը՝ մեր ընկերության անվամբ: Դիմումատուի կողմից չի ներկայացված որևէ ապացույց առ այն, որ ընկերության կողմից հայտի ներկայացման և կամ ապրանքային նշանները գրանցվելու օրվա դրությամբ ՀՀ-ում գրանցման կամ հանրահայտ ճանաչելու հիմքով կամ միջազգային պայմանագրի ուժով այլ անձի անվամբ գոյություն է ունեցել մեր անվամբ գրանցված և իրավական պաշտպանություն ունեցող ապրանքային նշան: Փաստորեն, դիմումի առաջին կետն իրենից ներկայացնում է ընդամենը անհիմն պնդում, որը ենթակա է մերժման:

Դիմումի երկրորդ կետում ապրանքային նշանի գրանցման հայտը՝ նշանը խնդրարկողի կողմից ներկայացնելու պահանջի վերաբերյալ օրենքից մեջբերում կատարելուց հետո շարադրված է՝ «Եթե ենթադրելու լինենք, որ նման հայտի հիմքում ընկած է եղել «Ալվան ներկ» իրանական ընկերության որոշումը, ապա...»: Նշված կետի վերաբերյալ կարելի է ասել, որ միայն զարմանալ կարելի է դիմողի միամտության վրա, որը դատարան է դիմում գրանցված ապրանքային նշանն անվավեր ճանաչելու դիմումով և ենթադրում է ապրանքային նշանի գրանցման դիմողին: Ավելին, դիմումի

նախաբանում դիմողը շարադրել է 2006 թվականի հունիսին հրավիրված ժողովի և Սիամակ էբադի Ամադիին լիազորություններ տալու մասին, և նշված հանգամանքի վրա կառուցելով իր դիմումը, միամտորեն ենթադրել է, որ 2006 թվականի հունիսին լիազորվող անձը հնարավոր է, որ 2001 թվականին դիմեր ապրանքային նշանի գրանցման դիմումով: Ակնհայտ է փաստերի խեղաթյուրումն ու դիմողի անգամ ենթադրության անհիմն լինելը: Դրանից ելնելով՝ երկրորդ կետն անընդունելի է և ենթակա է մերժման: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի 2 կետի հիման վրա՝ դիմողի կողմից ներկայացված 2006 թվականի հունիսի որոշումը որպես ապացույց վերաբերելի չէ սույն գործին և միջնորդում է այն հանել ապացույցների կազմից: Դիմումի 3-րդ կետում, դիմողն արդեն ապացուցված փաստ համարելով իր ենթադրության առարկան, այն է, որ հնարավոր է, որ սույն գործով վիճարկվող ապրանքային նշանների գրանցման դիմումները ՀՀ արտոնագրային վարչություն 2001 թվականին ստորագրել և ներկայացրել է Սիամակ էբադի Ամադիին՝ վկայակոչելով օրենքի պահանջն օտարերկրյա անձանց կողմից ապրանքային նշանների գրանցման գործերը լիազոր մարմնում գրանցված հավատարմատարի միջոցով վարելու վերաբերյալ, իր կարծիքով հիմք է ստեղծում, ենթադրյալ դիմումատուի կողմից ենթադրյալ դիմումը հիմք չհամարելու և, հետևաբար, արտոնագրային վարչության օրինական գործողությունները կասկածի ենթարկելու համար: Գտնում է, որ նույնիսկ կարիք չկա երկար հիմնավորումներ բերել նշված ենթադրատրամաբանական պնդումն ակնհայտ անհիմն ու անընդունելի համարելու համար: Նշված կետում շարադրվածն ամբողջությամբ անընդունելի է: Դիմումի 4-րդ կետի շարադրանքը հանդիսանում է նախորդ կետի՝ ըստ դիմողի փաստարկված ապացույց ընդունելուց հետո, տրամաբանական շարունակություն, որտեղ խոսվում է արտոնագրային հավատարմատարի իրավասություններն այն անձի կողմից տրվող լիազորագրով վավերացման մասին, որի անվամբ խնդրարկվում է ապրանքային նշանը: Մեկ անգամ ևս հարգելի դիմողի ենթադրություններն ու կասկածները փարատելու համար հայտարարվում է, որ սույն պատասխանի առաջին կետում նշված և ընկերության անվամբ գրանցված ապրանքային նշանների գրանցման դիմումները ներկայացվել են «Ավանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության կողմից ի դեմս ընկերության տնօրենի, ինչն ապացուցվում է ՀՀ արտոնագրային վարչություն ներկայացված դիմումներով: Շարադրվածի հիմքով դիմումի չորրորդ կետն անհիմն է ու անընդունելի: Դիմումի 5-րդ կետում կատարված է մեջբերում օրենքից և այնուհետև դիմողը կատարում է պնդում. «Հենց հայտի մեջ և որոշման տեքստում ամրագրված է, որ նման ապրանքային նշանի իրավատերն է հանդիսանում «Ավանշին-Ներկ» իրանական կազմակերպությունը, որը ոչ մի համաձայնություն չի տվել իր ապրանքային նշանը ՀՀ-ում գրանցելու համար»: Եթե դիմողը տեսած լիներ ապրանքային նշանների գրանցման վերաբերյալ «Ավանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած հայտ դիմումները, դատարանին ուղղված իր դիմումը կառուցած չէր լինի ենթադրությունների և առավել ևս, չէր կատարի սույն կետում նշված իր անհիմն պնդումները, քանի որ ներկայացված դիմումներում խոսք անգամ չկա և չէր կարող լինել իրանական կազմակերպության մասին: Դիմումի 6-րդ կետում

նշվում է «Առանցք» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից շուրջ յոթ տարի նման ապրանքատեսականու ներմուծման մասին որպես ապացույց առ այն, որ իրանական կազմակերպությունն ապրանքային նշանի օգտագործման «ԻՐ» իրավունքը չէր կարող տալ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը: Առանց քննարկելու, թե ինչ նման ապրանքների ներմուծման մասին է պնդումը, միայն կարող ենք նշել, որ սույն գործով դատաքննության առարկան ոչ թե իրանական կազմակերպության կողմից «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության տրված ապրանքային նշանի օգտագործման մասին է, այլ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ օրինական գրանցված և օրենքի ուժով իրավական պաշտպանություն ունեցող ապրանքային նշանի գրանցման օրինականության վիճարկումը: Նշված հիմքով դիմողի պնդումը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանն օգտագործման իրավունք տալու կամ չտալու վերաբերյալ անհիմն է և որևէ կապ չունի վեճի առարկայի հետ: Դիմումի 7-րդ կետում դիմողը վկայակոչելով որոշ տարեթվեր, թե հայտը ներկայացվել է 18.04.01 թվականին, ապրանքային նշանը գրանցելու մասին որոշումը պետական գրանցամատյանում գրանցվել է 26.11.01 թվականին, «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը փայատեր Վահիկ Հակոբ Նաիրյանին իրանական ընկերության որոշման 11.05.06 թվականին հանձնելու մասին, 2006 թվականի մարտին գործադիր տնօրենի փոփոխության մասին, կատարում է հաջորդ՝ արդեն հանձարեղ պնդումը, այն է՝ 2001թվականի նոյեմբերին «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ ապրանքային նշանի գրանցման փաստը չի կարող իրականություն դառնալ, քանի որ 2006 թվականի մարտին կատարվել է «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի փոփոխություն, և ըստ դիմողի, «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունն ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ որոշումը կայացվել է 2006 թվականին, որը մտավոր սեփականության գործակալության կողմից հետին ամսաթվով՝ 5 տարի հետ գնալով, պետական գրանցամատյանում գրանցելուց հետո, նաև հնարավոր է դարձել ինչ որ հրաշքով 2006 թվականին կայացված որոշման մասին տեղեկություններ հրապարակել 2001 թվականին. հրապարակված պաշտոնական տեղեկագրում: Գտնում ենք, որ ուղղակի անհնար է պատկերացնել այն ֆանտազիան», որով դիմողը հնարավոր է համարում տեղաշարժը ժամանակի մեջ և իր կարծիքով 2006թվականին կայացված որոշումը զետեղել 2001 թվականին հրապարակված պաշտոնական տեղեկագրում: Առավել ևս, որ իր այս անհիմն պնդմամբ դիմողը, ըստ էության, ՀՀ արտոնագրային վարչությանը ուղղակի մեղադրում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված քրեորեն հետապնդվող մի շարք ծանր հանցանքներում: Նման իրավիճակում դիմողն ուղղակի պարտավոր էր դիմել համապատասխան իրավասու մարմիններին: Գտնում ենք, որ դիմումի 7-րդ կետում շարադրված պնդումներն ուղղակի շատ մեղմ գնահատական տալով, անհիմն են ու անընդունելի: Դիմումի 8-րդ կետում դիմողը խոսելով Փարիզյան կոնվենցիայի անդամ երկրներում ապրանքային նշանների իրավական պաշտպանության մասին, շարադրելով, որ «Ալվան» ապրանքային նշանը գրանցված և ճանաչված է առնվազն 5 միջազգային կազմակերպության և

պետությունների կողմից դա փաստ է և նույնիսկ ամրագրված է չարաբաստիկ որոշման մեջ»: «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ ապրանքային նշանի գրանցման որոշման մեջ ընդհանրապես խոսք անգամ չկա և չէր էլ կարող լինել դիմողի խոսքերով, առնվազն 5 միջազգային կազմակերպության և պետությունների կողմից գրանցված և ճանաչված լինելու մասին, այն էլ այլ կազմակերպության անվամբ, որևէ ցուցահանդեսի մասնակցությունը դեռ չի նշանակում այն երկրի կողմից, որում կազմակերպված է այդ ցուցահանդեսը, ցուցահանդեսին ներկայացված ապրանքի վրա զետեղված ապրանքային նշանի գրանցում և պաշտոնապես ընդունում, դիմողի վկայակոչած «Նման տիտղոսային և միջազգային միջպետական համաձայնագրերի առկայության և անդամակցության պարագայում...» ընդամենը անհիմն պնդումներ են: Նշենք, որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «2. Ապրանքային նշանի առաջնությունը կարող է սահմանվել առաջին հայտը Փարիզյան կոնվենցիայի մասնակից որևէ պետություն ներկայացնելու թվականով (կոնվենցիայով առաջնություն), եթե հայտը լիազոր մարմին է ներկայացվել այդ թվականից վեց ամսվա ընթացքում.

Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսների ցուցանմուշների վրա տեղադրված նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականով (ցուցահանդեսային առաջնություն), եթե հայտը լիազոր մարմին է ներկայացվել այդ թվականից վեց ամսվա ընթացքում: Կոնվենցիայով կամ ցուցահանդեսային առաջնության իրավունքից օգտվել ցանկացող հայտատուն պարտավոր է այդ մասին նշել հայտը ներկայացնելիս կամ հայտը պետական լիազորված մարմին ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում՝ կցելով այդ պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը, կամ այդ փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացնել հայտի ներկայացման թվականից երեք ամսվա ընթացքում:

Վերջնական պարզության համար նշել է, որ մեր ընկերության կողմից դիմումի ներկայացման օրվա դրությամբ Փարիզյան կոնվենցիայի անդամ որևէ երկրում մեր կողմից խնդրարկված ապրանքային նշանի գրանցման հայտ ներկայացված, առավել ևս, գրանցված ապրանքային նշան չի եղել: Դիմողի անտեղյակության կամ փաստերի խեղաթյուրման հնարավորությունը բացառելու համար միայն մեկ փաստ նշենք՝ Իրանական կազմակերպությունը քաջատեղյակ է եղել «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության ապրանքային նշանի գոյության մասին և դեռ ավելին, «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության հիմնադիր մասնակիցների 24.02.06թվականի ընդհանուր ժողովի /որով որոշվել է կատարել տնօրենի փոփոխություն/ օրակարգում ի թիվս այլ հարցերի, որպես օրակարգի 7-րդ հարց ներառվել է ու քննարկվել ընկերության ապրանքային նշանի օգտագործման հարցի լուծումը՝ այն է բաժնետեր Վահիկ-Հակոբ Նաիրյանի առաջարկությունը որոշակի փոխհատուցման դիմաց «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության ապրանքային նշանի օգտագործման իրավունքն իրեն հանձնելու մասին:

II. Պատճառաբանական մաս

Քննելով դիմումը ներկայացված հիմքերի սահմաններում, գնահատելով ապացույցները՝ դատարանը գտնում է, որ դիմումը՝ ապրանքային նշանների գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով անհիմն է և ենթակա մերժման, իսկ այդ գրանցումների հիման վրա տրված վկայականն ու վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

1. Գործի փաստերը

18.04.2001 թվականին «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը դիմում է ներկայացրել ՀՀ արտոնագրային վարչություն՝ խնդրելով դիմումին կից ներկայացված հայտի մեջ նշված պատկերը որպես ապրանքային /սպասարկման/ նշան գրանցել իր անունով: Հայտի գրանցման համար է նշվել 20010248-ը: Հայտը ՀՀ արտոնագրային վարչություն մուտք է եղել 18.04.2001 թվականին N 0248-ի ներքո:

Վերը նշված հայտը քննարկման ընդունելու մասին ՀՀ արտոնագրային վարչության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժինը կազմել է տեղեկանք, որի վրա առկա է «14.05.2001թ.» գրառումը:

ՀՀ արտոնագրային վարչության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժինը «Ալվանշին Փարս» փակ բաժնետիրական ընկերության կողմից 18.04.2001 թվականին ներկայացված N 20010247 հայտի հիման վրա որոշում է կայացրել ապրանքային նշանը գրանցելու մասին:

Վերը նշված հայտի հիման վրա ՀՀ արտոնագրային վարչությունը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը տվել է ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման N 6375 վկայականը, որը 26.11.2001 թվականին գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 18.04.2011 թվականը գործողության ժամկետով:

Վերը նշված հայտի հիման վրա ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը տվել է ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման N 6982 վկայագիրը, որը 24.09.2002 թվականին գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 18.04.2011 թվականը գործողության ժամկետով:

2. Կիրառելի իրավունքը

Հայցապահանջի նկատմամբ ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Ապրանքային և սպասարկման

նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի նորմերը:

3. Իրավական խնդիրը և վերլուծությունը

Դիմողն իր պահանջների հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171 հոդվածը՝ դա պատճառաբանել է նրանով, որ «Ալվան» տառերով ապրանքային նշանը և կապույտ, դեղին, կարմիր գույներով տարբերանշանը հանդիսանում են «Ալվան ներկ» Իրանի ԻՀ կազմակերպության գրանցված ապրանքային նշանը, որը պահպանվում է ողջ աշխարհում: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1 կետի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Մինչդեռ, դիմողը որևէ ապացույց չներկայացրեց դատարանին, որը կհաստատեր իր վկայակոչած փաստն այն մասին, որ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ՝ որոշման մեջ նշված ապրանքային նշանը գրանցելիս այն հանդիսացել է «Ալվան ներկ» ԻԻՀ կազմակերպության գրանցված ապրանքային նշանը, որը պահպանվել է ողջ աշխարհում: Դիմողն իր պահանջների հիմքում դնելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1 կետը՝ դա պատճառաբանել է նրանով, որ Սիամակ Էբադի Ամուդին, «Ալվան» կուպերատիվ ընկերության տնօրենների խորհրդի 2006 թվականի հունիս ամսվա որոշմամբ ունենալով միայն «Ալվան» ապրանքանշանն օգտագործելու, տիրապետելու և «ունենալու» լիազորություններ, դիմել է ՀՀ արտոնագրային վարչություն՝ այն գրանցելու համար: Դատարանը գտնում է, որ հիշատակված որոշումը չի կարող համարվել սույն դիմումի քննության համար վերաբերելի ապացույց, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, ապրանքային նշանները գրանցվել են 2001 թվականին, իսկ որոշումը կայացվել է 2006 թվականին:

Դիմողն իր պահանջների հիմքում դնելով նույն օրենքի նույն հոդվածի 3 կետը՝ դա պատճառաբանում է նրանով, որ Սիամակ Էբադի Ամուդին, հանդիսանալով օտարերկրյա քաղաքացի, չէր կարող ՀՀ արտոնագրային վարչությունում գործերը վարել անձամբ: Դատարանը հետազոտելով «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը և 22.02.2000 թվականին նրան տրված վկայականը, հաստատված համարեց այն փաստը, որ ընկերությունը հանդիսանում է ՀՀ իրավաբանական անձ, և նման պայմաններում դիմողի վկայակոչած օրենքի համապատասխան դրույթը կիրառելի չէ սույն վեճի նկատմամբ: Դիմողն իր պահանջների հիմքում դրել է նաև նույն օրենքի 12 հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը: Դատարանը գտնում է, որ նշված դրույթը ևս ենթակա չէ կիրառման սույն վեճի նկատմամբ, քանի որ օրենքի 12 հոդվածի 1 կետը «գ» ենթակետով է լրացվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.11.2004 թվականին ընդունված՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-139-Ն օրենքով. ապրանքային նշանները գրանցելիս նշված օրենքը նման դրույթ չի պարունակել:

Դիմողի այն պատճառաբանությունը, որ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության փայտեր Վահիկ Հակոփի Հակոփ Նաիրյանի կողմից ստացականը 11.05.2006 թվականին տալով հաստատվում է ապրանքային նշանը գրանցելու մասին որոշումը ոչ թե 2001 թվականին, այլ՝ 2006 թվականին կայացված լինելու հանգամանքը՝ անհիմն է և չի կարող հիմք հանդիսանալ այդ փաստը հաստատված համարելու համար, քանի որ այդ հանգամանքը, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի 1 կետի, կարող է հաստատվել միայն որոշակի ապացույցներով, տվյալ դեպքում՝ որոշման կայացման ամսաթվով, որոշումը Հայարտոնագրում մուտք լինելու ամսաթվով, դիմումում նշված վկայականը և վկայագիրը գրանցելու ամսաթվերով, որոնցում որպես տարեթիվ նշված է 2001 թվականը:

Դիմողը, իր դիմումի հիմքում դնելով վերը նշված օրենքի 8 հոդվածը, դա պատճառաբանում է նրանով, որ ՀՀ արտոնագրային վարչության կողմից փորձաքննությունն անց է կացվել կոպիտ խախտումներով, քանի որ, փորձաքննության ընթացքում ապրանքային նշանի սեփականատիրոջից՝ «Ալվան» իրանական կազմակերպությունից չի պահանջվել ոչ լիազորագիր, ոչ էլ պայմանագիր: Դատարանը գտնում է, որ դիմողի այս պատճառաբանությունը ևս անհիմն է ու չի կարող հիմք հանդիսանալ դիմումը բավարարելու համար, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, դիմողը որևէ ապացույց չներկայացրեց դատարանին, որը կհաստատեր իր վկայակոչած փաստն այն մասին, որ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ՝ որոշման մեջ նշված ապրանքային նշանը գրանցելիս այն հանդիսացել է «Ալվան ներկ» ԻԻՀ կազմակերպության գրանցված ապրանքային նշանը, որը պահպանվել է ողջ աշխարհում:

Դատարանը գտնում է, որ վերը նշված հանգամանքները բավարար հիմք են հանդիսանում դիմողի պահանջը՝ կապված ապրանքային նշանների գրանցումն անվավեր ճանաչելու հետ, մերժելու համար: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1 կետի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննությանը: Դատարանը գտնում է, որ դիմողի պահանջը՝ կապված դիմումում նշված վկայականն ու վկայագիրն անվավեր ճանաչելու հետ, ենթակա չէ դատարանում քննության, քանի որ դրանք չեն հանդիսանում իրավունք առաջացնող վարչական ակտեր: Տվյալ դեպքում վարչական ակտ են հանդիսանում նշանների գրանցման պետական մատյանում կատարված գրանցումները, որոնց հիման վրա տրվել են վկայականը և վկայագիրը: Վերջիններս հանդիսանում են ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկություններ պատկանող փաստաթղթեր և դրանց անվավեր ճանաչելը չի կարող հանգեցնել իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ են մնում վարչական ակտերը՝ նշանների գրանցման պետական մատյանում կատարված գրանցումները:

Դատարանը քննության առնելով պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը՝ կապված դրանում նշված թվով յոթ փաստաթղթերն ապացույցների կազմից հանելու հետ, նկատի ունենալով միջնորդության հիմքում դրված պատճառաբանությունները գտավ, որ միջնորդությունը հիմնավոր է և ենթակա բավարարման, քանի որ այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածի 1 կետի

	առաջին մասից և նույն օրենսգրքի 51 հոդվածից՝ նկատի ունենալով այդ միջնորդության մեջ նշված փաստաթղթերի՝ վեճի լուծման համար նշանակություն չունենալու հանգամանքից ելնելով դրանց վերաբերելի չլինելը: Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110, 130-132 հոդվածներով՝ դատարանը
	Վ Ճ Ռ Ե Ց «Ավան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության դիմումը՝ ՀՀ արտոնագրային վարչության թիվ 20010247 և 20010248 հայտերի հիման վրա ապրանքային նշանների գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, մերժել: Քաղաքացիական գործի վարույթը՝ այդ գրանցումների հիման վրա տրված թիվ 6375 վկայականը և թիվ 6985 վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճել: Վճիռը կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ դրա հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:
	ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	24-10-2008
Էջերի քանակը:	1-ին հատոր 155էջ, 2-րդ հատոր 174
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	24-10-2008
Էջերի քանակը:	174
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	24-10-2008
Ուր:	ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան
Գրության համարը:	Ե-9134
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
Ամսաթիվ:	31-10-2008
Դատական Գործ N: ԵՔԴ/0030/02/08	

Ամսաթիվ:	21-10-2008
Քողոք բերող անձը	
Անուն:	Ալվան Ներկ Իրանական ընկերություն
Հասցե:	Թեհրան, Խաֆտե-Տիր հրապարակ
Տիպ:	Օտ. առեվտրային
Ներկայացուցիչ	
Անուն	Արմեն
Ազգանուն	Ումրշատյան
Հասցե	Բաղրամյան 1, բն.12
Սեռ	Արական
Ում կողմից է բերվել քողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Քողոքարկվող դատական ակտը:	22.09.08 մերժվել է
Գործի համարը:	ԵԲԴ/0030/02/08
Ամսաթիվ:	03-11-2008
Վիճակագրական տողի համարը:	5.5
Գործի համարը:	ԵԲԴ/0030/02/08
Գործը բաղկացած է (հատուոր / էջերի քանակ):	174
Ամսաթիվ:	03-11-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Ստեփան Միքայելյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Նախշուն Գևորգի Տավարացյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Դանիել Խաչատրյան

Երբ:	05-11-2008
Որոշումը ուղարկվել է կողմերին:	05-11-2008
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	05-11-2008
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-12-2008
Ամսաթիվ:	22-01-2009
Ամսաթիվ:	05-02-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	
Ամսաթիվ:	20-02-2009
Անվտիտիս թողնված դատական ակտ:	Պատճառաբանվել է
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Երևանի քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ0030/02/08 դատարանի վճիռ 2009թ. Քաղաքացիական գործ՝ թիվ ԵՔԴ0030/02/08 Դատավոր՝ Գ.Հակոբյան Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը նախագահությամբ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ դատավորների՝ Ն.ՏԱՎԱՐԱՑՅԱՆ Դ.ԽԱԶԱՏՐՅԱՆ քարտուղարությամբ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ Ա.ՈՒՄՇԱՏՅԱՆԻ պատասխանողի ներկայացուցիչ Ա.ԱԲԳԱՐՅԱՆԻ երրորդ անձի ներկայացուցիչ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ 2009 թվականի փետրվարի 20-ի դռնբաց դատական նիստում քննելով դիմող «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության ներկայացուցիչ Արմեն Ումրշատյանի վերաքննիչ բողոքը Երևանի քաղաքացիական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԵՔԴ0030/02/08 վճռի դեմ՝ ըստ դիմումի «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության՝ ՀՀ արտոնագրային վարչության հայտերի հիման վրա ապրանքային նշանների գրանցումը և դրանց հիման վրա տրված վկայականներն անվավեր ճանաչելու պահանջների մասին՝ Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ արտոնագրային վարչության թիվ 20010247 և 20010248 հայտերի հիման վրա ապրանքային նշանների գրանցումը, դրանց հիման վրա տրված թիվ 6375 և 6982 վկայականները:

Երևանի քաղաքացիական դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԵՔԴ0030/02/08 վճռով մերժել է «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության դիմումը՝ ՀՀ արտոնագրային վարչության թիվ 20010247 և 20010248 հայտերի հիման վրա ապրանքային նշանների գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով: Քաղաքացիական դատարանը վճռել է նաև քաղաքացիական գործի վարույթը՝ այդ գրանցումների հիման վրա տրված թիվ 6375 վկայականը և թիվ 6985 վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասով, կարճել:

Սույն գործով վերաքննիչ բողոք է բերել դիմող «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության ներկայացուցիչ Արմեն Ումրշատյանը:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Երևանի քաղաքացիական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԵՔԴ0030/02/08 վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը, հիմնավորումները, վիճարկվող փաստերը, դրանց հաստատմանն ուղղված ապացույցները և պահանջը.

ա) վերաքննիչ բողոքի իրավական հիմքերն ու հիմնավորումները.

Սույն վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ իրավական հիմնավորումներով. Քաղաքացիական դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի, նույն հոդվածի 3-րդ կետի, նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի գ ենթակետի, 8-րդ, 46-րդ և 48-րդ հոդվածների դրույթները:

Քաղաքացիական դատարանը չի իրականացրել սույն քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտություն: Սիսմակ Էբադի Ամուդիին անունով տրված որոշումը հիմք չի կարող հանդիսանալ արտոնագրային վարչությունում գործառնություն իրականացնելու համար՝ պայմանավորված վերջինիս Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի լինելու հանգամանքով:

Հայտի և որոշման տեքստում ամրագրվել է, որ ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում «Ալվան ներկ» իրանական կազմակերպությունը, որը որևէ համաձայնություն չի տվել իր ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում գրանցելու համար:

Հայտը 2001 թվականի ապրիլի 18-ին ներկայացնելու և այն նշանների գրանցման պետական մատյանում 2001 թվականի նոյեմբերի 26-ին գրանցված լինելու հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ «Ալվան» իրանական կազմակերպության համապատասխան որոշումը Հայաստանի Հանրապետություն է ուղարկվել և հանձնվել փայտտերերին 2006 թվականի մայիսի 11-ին: Փայտտեր Վահիկ Նաիրյանի կողմից ապրանքային նշանը գրանցելու մասին որոշումը ստանալու մասին գրավոր ստացականը բավարար հիմք է հանդիսանում ապրանքային նշանը գրանցելու մասին որոշումը ոչ թե 2001, այլ 2006 թվականին կայացնելու փաստը հաստատված համարելու համար:

բ) վերաքննիչ բողոքում վիճարկվող փաստերը.

- «Ալվան» տառերով ապրանքային նշանը և կապույտ, դեղին, կարմիր գույներով տարբերանշանը հանդիսանում են «Ալվան ներկ» Իրանի ԻՀ կազմակերպության գրանցված ապրանքային նշանը, որը պահպանվում է ողջ աշխարհում,
 - Սիամակ Էբադի Ամուդին հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի և նրա անվամբ տրված որոշումը հիմք չի կարող հանդիսանալ արտոնագրային վարչությունում գործառնություն իրականացնելու համար,
 - «Ալվան ներկ» իրանական կազմակերպությունը որևէ մեկին, այդ թվում նաև՝ Սիամակ Էբադի Ամուդին, չի տվել լիազորագիր իր ապրանքային նշանը գրանցելու համար,
 - ապրանքային նշանի օգտագործման իրավագործությունը իրանական կազմակերպությունը չէր կարող տալ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը, քանի որ շուրջ յոթ տարի նման ապրանքատեսականի ՀՀ ներկրում է «Առանցք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ մատակարարման պայմանագրերի հիման վրա,
 - հայտը ներկայացվել է 2001 թվականի ապրիլի 18-ին և այն գրանցված է նշանների գրանցման պետական մատյանում 2001 թվականի նոյեմբերի 26-ին: Նշված հանգամանքը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Ալվան» իրանական ընկերության որոշումը ՀՀ է բերվել և հանձնվել փայտտերերին 2006 թվականի մայիսի 11-ին: Այդ կապակցությամբ առկա է հիշատակված որոշումը ստանալու մասին փայտտեր Վահիկ Նաիրյանի կողմից տրված ստացականը: Սիամակ Էբադի Ամուդին գործադիր տնօրեն է նշանակվել 2006 թվականի մարտի 31-ին,
 - հայտի նախնական փորձաքննությունն անցկացվել է կոպիտ խախտումներով:
- գ) բողոք բերած անձի կողմից ներկայացված՝ վիճարկվող փաստերի հաստատմանն ուղղված ապացույցները.
- Վահիկ Նաիրյանի կողմից տրված ստացական:
- դ) հետևյալ պահանջով.
- Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Երևանի քաղաքացիական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԵՔԴ0030/02/08 վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3. Քաղաքացիական դատարանի կողմից հաստատված փաստերը.

- «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը 2001 թվականի ապրիլի 18-ին դիմում է ներկայացրել ՀՀ արտոնագրային վարչություն՝ խնդրելով դիմումին կից ներկայացված հայտի մեջ նշված պատկերը՝ որպես ապրանքային /սպասարկման/ նշան, գրանցել իր անունով: Հայտի գրանցման համար նշվել է 20010248-ը: Հայտը ՀՀ արտոնագրային վարչություն մուտք է եղել 2001 թվականի ապրիլի 18-ին թիվ 0248 համարի ներքո,
- նշված հայտը քննարկման ընդունելու մասին ՀՀ արտոնագրային վարչության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժինը կազմել է տեղեկանք, որի վրա առկա է «2001 թվականի մայիսի 14» գրառումը,
- ՀՀ արտոնագրային վարչության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժինը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2001 թվականի ապրիլի 18-ին ներկայացված թիվ 20010247 հայտի հիման վրա որոշում է կայացրել ապրանքային նշանը գրանցելու մասին,
- նշված հայտի հիման վրա ՀՀ արտոնագրային վարչությունը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը տվել է ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6375 վկայականը, որը 2001 թվականի նոյեմբերի 26-ին գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 2011 թվականի ապրիլի 18-ը գործողության ժամկետով,
- նշված հայտի հիման վրա ՀՀ մտավոր սեփականության

գործակալությունը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությանը տվել է ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6982 վկայագիրը, որը 2002 թվականի սեպտեմբերի 24-ին գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 2011 թվականի ապրիլի 18-ը գործողության ժամկետով:

4. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը և ապացույցները.

ա) բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

- «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության թիվ 20010247 հայտի /ներկայացման ամսաթիվը՝ 2001 թվականի ապրիլի 18-ը/ հիման վրա ՀՀ արտոնագրային վարչությունը կայացրել է ապրանքային նշանը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցելու մասին որոշում և ձևակերպել ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6375 վկայականը: Հիշատակված վկայականը 2001 թվականի նոյեմբերի 26-ին գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 2011 թվականի ապրիլի 18-ը գործողության ժամկետի ամրագրմամբ,

- «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության թիվ 20010248 հայտի /ներկայացման ամսաթիվը՝ 2001 թվականի ապրիլի 18-ը/ հիման վրա ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրվել է ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6982 վկայագիրը: Այն 2002 թվականի սեպտեմբերի 24-ին գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 2011 թվականի ապրիլի 18-ը գործողության ժամկետի ամրագրմամբ:

բ) բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերի հաստատմանն ուղղված ապացույցները.

- ապրանքային նշանը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցելու մասին որոշում,
- ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6375 վկայական և թիվ 6982 վկայագիր:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

ա) վերաքննիչ բողոքի քննության համար կիրառելի նորմատիվ իրավական դրույթները և դրանց վերաբերյալ հիմնավորումները.

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ և 219-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթները, այն է՝ վերաքննիչ բողոքը /կամ դրա մասը/ ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ և դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, ղեկավարվում է հետևյալ նորմատիվ-իրավական դրույթներով.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի դրույթով, որի համաձայն դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով ձեռք բերված ապացույցների համաձայն՝ «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության թիվ 20010247 հայտի /ներկայացման ամսաթիվը՝ 2001 թվականի ապրիլի 18-ը/ հիման վրա ՀՀ արտոնագրային վարչությունը կայացրել է ապրանքային նշանը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցելու մասին որոշում և ձևակերպել ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6375 վկայականը:

Հիշատակված վկայականը 2001 թվականի նոյեմբերի 26-ին

գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 2011 թվականի ապրիլի 18-ը գործողության ժամկետի ամրագրմամբ: «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության թիվ 20010248 հայտի /ներկայացման ամսաթիվը՝ 2001 թվականի ապրիլի 18-ը/ հիման վրա ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրվել է ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6982 վկայագիրը: Այն 2002 թվականի սեպտեմբերի 24-ին գրանցվել է նշանների գրանցման պետական մատյանում՝ մինչև 2011 թվականի ապրիլի 18-ը գործողության ժամկետի ամրագրմամբ:

Նշված փաստական հանգամանքները Վերաքննիչ դատարանը հաստատված է համարում ապրանքային նշանը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցելու մասին որոշմամբ, ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6375 վկայականով և թիվ 6982 վկայագրով:

Դատաքննությամբ որևէ կերպ չի հիմնավորվել հիշատակված որոշմամբ ապրանքային նշանը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցելու ժամանակահատվածում այն՝ որպես ապրանքային նշան «Ալվանշին» իրանական կազմակերպության անվամբ արդեն իսկ գրանցված լինելու փաստը /ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի ուժով նշված փաստի ապացուցման բեռը կրում է դիմող կողմը/:

Քննարկվող պարագայում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործում բացակայում է «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության կողմից հիշատակված հայտերը ներկայացնելու թվականի /2001 թվական/ դրությամբ հիշյալ նշանները Հայաստանի Հանրապետությունում գրանցված, որպես հանրահայտ ապրանքային նշաններ ճանաչված և միջազգային պայմանագրի ուժով դրանց իրավական պահպանություն տրամադրած լինելու փաստը հավաստող որևէ ապացույց: Վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկն այն մասին, որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթի կիրառմամբ, Սիամակ էբադի Անուդիինի անունով տրված որոշումը հիմք չի կարող հանդիսանալ արտոնագրային վարչությունում գործառնություն իրականացնելու համար՝ պայմանավորված վերջինիս Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի լինելու հանգամանքով, Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում հետևյալ պատճառաբանությամբ.

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթի համաձայն՝ օտարերկրյա անձինք ապրանքային նշանների գրանցման հետ կապված գործերը վարում են լիազոր մարմնում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով:

Քննարկվող պարագայում սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությամբ Վերաքննիչ դատարանը պարզեց, որ ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ հիշատակված հայտը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ հանդիսացող «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերությունը, որպիսի փաստը հավաստվում է ապրանքային նշանների գրանցման թիվ 20010247 և թիվ 20010248 հայտերում վերջինիս կնիքի առկայությամբ:

Վերաքննիչ բողոքում բողոքաբերը փաստարկել է, որ հայտը 2001 թվականի ապրիլի 18-ին ներկայացնելու և այն նշանների գրանցման պետական մատյանում 2001 թվականի նոյեմբերի 26-ին գրանցված լինելու հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ «Ալվան» իրանական կազմակերպության համապատասխան որոշումը Հայաստանի Հանրապետություն է ուղարկվել և հանձնվել փայտաբերին 2006 թվականի մայիսի 11-ին: Ի հավաստումն նշված փաստի բողոքաբերը վկայակոչել է փայտաբեր Վահիկ Նաիրյանի կողմից ապրանքային նշանը

	գրանցելու մասին որոշումը ստանալու մասին գրավոր ստացականի առկայությունը, որպիսի հանգամանքը բավարար հիմք է հանդիսանում հիշատակված որոշումը ոչ թե 2001, այլ 2006 թվականին կայացնելու փաստը հաստատված համարելու համար: Քննարկող պարագայում վերաքննիչ բողոքում ներկայացված վերոգրյալ փաստարկը Վերաքննիչ դատարանը «Ալվանշին-Փարս» փակ բաժնետիրական ընկերության թիվ 20010247 թիվ 20010248 հայտերը 2001 թվականի ապրիլի 18-ին ներկայացնելու, ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6375 վկայականը նշանների գրանցման պետական մատյանում 2001 թվականի նոյեմբերի 26-ին գրանցված լինելու փաստը նշված հայտերում և վկայականում առկա տարեթվով հաստատված լինելու պայմաններում, սույն գործի լուծման համար վճռորոշ չի համարում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի դրույթով, որի համաձայն քաղաքացիական գործի վարույթը կարճվում է, եթե վեճը ենթակա չէ քննության դատարանի կողմից: Քննարկվող պարագայում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ արտոնագրային վարչության կողմից ձևակերպած ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6375 վկայականը և ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրված ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 6982 վկայագիրն անվավեր ճանաչելու հարցը ենթակա չէ դատարանում քննության, քանի որ այն չի կարող առաջ բերել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքներ և հանդիսանալ վարչական ակտ: Նշվածը նկատի ունենալով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը կայացվել է սույն վեճի ճիշտ լուծումը կարգավորող համապատասխան իրավանորմերի կիրառմամբ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի պահանջներով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց դիմող «Ալվան ներկերի և ռետինե իրերի» իրանական կազմակերպության ներկայացուցիչ Արմեն Ումրշատյանի վերաքննիչ բողոքը մերժել: Օրինական ուժի մեջ թողնել Երևանի քաղաքացիական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԵՔԴ0030/02/08 վճիռը: Պետական տուրքի հարցը համարել լուծված: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով: Դատավոր՝ դատավոր՝ դատավոր՝ Ս.Միքայելյան Ն.Տավարացյան Դ.Խաչատրյան
Ամսաթիվ:	02-03-2009
Ամսաթիվ:	02-03-2009
Էջերի քանակ:	1-155, 2-174, 3-66
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	10-03-2009
Ուր:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Գրության համարը:	

Այլ նշումներ:	
Դատական Գործ N: ԵՔԴ/0030/02/08	
Ամսաթիվ:	17-03-2009
Ամսաթիվ:	17-03-2009
Էջերի քանակը:	155,174,66
Գործին կից նյութերը:	գործը բաղկացած է 3 հատորից
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	